ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 588-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2016.07.01/14(557) Հոդ.172	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Էկոնոմիկայի նախարար	*Ընդունման ամսաթիվը*	20.06.2016
Ստորագրող մարմինը	Էկոնոմիկայի նախարար	*Ստորագրման ամսաթիվը*	20.06.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11.07.2016	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 16 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՏԻ, ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄԻ, ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՎԱՆ, ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԼ ՄԻԿՐՈՍԽԵՄԱՅԻ ՏՈՊՈԼՈԳԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻՑ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
27 հունիսի 2016 թ.
Պետական գրանցման թիվ 10316205

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

20 հունիսի 2016 թ. **N 588-Ն**
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 16 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՏԻ, ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄԻ, ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՎԱՆ, ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԼ ՄԻԿՐՈՍԽԵՄԱՅԻ ՏՈՊՈԼՈԳԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻՑ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝

Հրամայում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության պետի 2001 թվականի մարտի 26-ի «ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության կողմից արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված պետական տուրքերի գանձման և հաշվառման կարգը հաստատելու մասին» N 16 հրամանը:

2. Հաստատել գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի, ապրանքային նշանի, աշխարհագրական նշումի, ծագման տեղանվան, երաշխավորված ավանդական արտադրանքի և ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի իրավական պահպանության հետ կապված պետական տուրքերը սահմանված չափից ավել վճարված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից իրականացվող գործողության կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. Մինասյան

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2016 թվականի հունիսի 20-ի
N 588-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԳՅՈՒՏԻ, ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄԻ, ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՎԱՆ, ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԼ ՄԻԿՐՈՍԽԵՄԱՅԻ ՏՈՊՈԼՈԳԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻՑ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգը սահմանում է գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի, ապրանքային նշանի, աշխարհագրական նշումի, ծագման տեղանվան, երաշխավորված ավանդական արտադրանքի և ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի (այսուհետ՝ օբյեկտ) իրավական պահպանության հետ կապված պետական տուրքերը սահմանված չափից ավել վճարելու դեպքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից իրականացվող գործողության կարգը:

2. Եթե սույն կարգի 1-ին կետում նշված օբյեկտի իրավական պահպանության հետ կապված վճարված պետական տուրքի գումարը գերազանցում է սահմանված չափը և պետական տուրք վճարողը ցանկանում է ավել վճարված գումարն օգտագործել որևէ օբյեկտի իրավական պահպանության հետ կապված այլ գործողություն կատարելու կամ ծառայություն մատուցելու (այսուհետ՝ գործողություն) համար, ապա այս դեպքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ համապատասխան ծառայություն կամ գործողություն իրականացնող ստորաբաժանման ղեկավարը՝

1) անդորրագրի (բնօրինակի) վրա նշում է այն օբյեկտի հայտի կամ գրանցման համարը, որի նկատմամբ որևէ գործողություն կատարելու համար օգտագործված է տվյալ անդորրագրով վճարված գումարի մի մասը, նշում է տվյալ օբյեկտի իրավական պահպանության հետ կապված գործողության (գործողությունների) համար օգտագործված գումարի և չօգտագործված մնացորդի չափերը,

2) ստորագրում է և նշում թվականը:

3. Այդպիսի նշումներով անդորրագիրը կցվում է տվյալ օբյեկտի հայտի գործին, իսկ դրա պատճենը ստորաբաժանման դրոշմակնիքով՝ վերադարձվում է պետական տուրք վճարողին՝ հետագայում որևէ օբյեկտի իրավական պահպանության հետ կապված այլ գործողություն կատարելու մասին դիմումին կից ներկայացնելու համար: